Նախագծի ղեկավար՝ **Քոչարյան Մարինե**

Դասարան՝ **7 բ**

Առարկա՝ **Գերմաներեն**

Նախագծի թեման՝ **Աշխատանքային տետր 3-րդ դասարանի համար՝**

**(տառերի գրավոր ուսուցում)**

Տեսակը՝ **Գործնական / աշխատանքային տետրի ստեղծում/**

Կատարման ժամկետ՝ **6 շաբաթ**

| Նախագծի իրականացման փուլերը | Ուսուցչի գործողությունները | Աշակերտի գործողությունները |
|---|---|---|
| **1. Նախապատրաստական փուլ** | 1. Առաջադրվում են տարբեր դասագրքեր<br>• Նկարել տառերին համապատասխան գունավոր առարկաներ, պատկերներ<br>• Գրել բառեր բաց թողած տառերով՝գուշակել այդ բառերը,<br>• Յուրաքանչյուր էջի վերջում՝ անկյունում նոր բառերի փերթակ նկարել<br><br>2. Առաջ է քաշում աշակերտների հետ միասին պրոբլեմային հարց՝ Ինչպե՞ս խթանել օտար լեզվի նկատմամբ հետաքրքրությունը:<br>3. Որոշել հետազոտության հարցերը՝<br>✔ Ի՞նչն է գրավում սովորողին:<br>✔ Ինչպե՞ս գրավել սովորողի ուշադրությունը: | Աշակերտները քննարկում են վերնագրի ընտրությունը: Քննարկում են էջերի ֆանակը:<br><br>Որոշում են աշխատել երկուսով՝սկզբում ձեռագիր՝ապա համակարգչային տարբերակով; |

| | | |
|---|---|---|
| **2. Պլանավորման փուլ** | 1. Որոշում են ինֆորմացիայի որոնման աղբյուրները . դասագիրք, համացանց<br><br>2. Որոշում են պրոդուկտի վերջնական տեսքը, ծավալը:<br><br>3. Կատարում է աշխատանքային պարտականությունների բաժանում, հաշվի առնելով աշակերտների նախասիրությունները, կարողությունները, կարծիքները: | 1. Որոշում են պատասխանատու, ով կատարում է գրանցումներ՝ ուսուցչի ցուցումներ, աշխատանքի բաշխում, ժամանակի կառավարում:<br><br>2. Ստանձնում է իր պարտականությունները:<br><br>3. Կարծիք է հայտնում և տարբերակներ առաջադրում պրոդուկտի տեսքի վերաբերյալ:<br><br>1. Էլինար, Սիմոն – ուսումնասիրում են տարբեր դասասագրքեր, Ավստրիայում և Գերմանիայում հրատարակված աշխատանքային տետրեր:<br>2. Էլինար– զբաղվում է ձեռագիր տպագրության հարցերով:<br>3.Սիմոն – զբաղվում է համակարգչային ձևավորմամբ, պատրաստում սահիկաշար: |

| | | |
|---|---|---|
| **3. Հետազոտական աշխատանք** | 1.Կազմակերպել քննարկում, որի ժամանակ կներկայացնեն նախնական արդյունքները<br>*ա/ հետազոտական աշխատանքներ՝ դիտում, տեսական աղբյուրների ուսումնասիրում/,*<br><br>2. Կազմակերպել քննարկում, որի ժամանակ կներկայացնեն նախնական արդյունքները, կուղղորդեն, ցույց կտան սխալները, կմղեն խնդրի ինքնուրույն լուծմանը, կօգնեն վերջնական տեսքի բերել աշխատանքները,<br>կհամակարգեն: | , |

| | | |
|---|---|---|
| **5. Գնահատում** | Ուսուցիչը<br><br>տալիս է իր որոշիչ գնահատականը | Կատարում են ինքնագնահատում: |

# Ընթացակարգը՝

15.02- Թեմայի ընտրություն- Ուսուցչի հետ քննարկում տարբեր թեմաների շուրջ

22.02 – Սահմանում են նպատակ:Կատարում են ընտրված թեմայի ուսումնասիրություն:

Կատարում են աշխատանքային պարտականությունների բաժանում:

29.02 – Տարբեր աղբյուրներից ուսումնասիրություններ: Նյութերի, դասագրքի համապատասխանության քննարկում.

07.03 - Տեքստի կազմի և վերնագրի ձևավորում

14.03 - Համակարգչային ձևավորում,

21.03-Վերջնական արդյունքի քննարկում,

Նախագծի ներկայացում:

***Նպատակ***՝ Ուսուցչի աշխատանքը թեթևացնելու նպատակով ՝ ստեղծել 3-րդ դասարանցիների համար գերմաներենի  աշխատանքային տետր(տառերի ձեռագիր ուսուցում)

**Աշակերտների մոտ ձևավորվում են հետևյալ կարողունակությունները.**

- **Սովորել սովորելու կարողունակություն/** սովորողներն ինքնուրույն և մյուսների հետ համատեղ արդյունավետ սովորում և աշխատում են կյանքի տարբեր իրավիճակներում: Նրանք ճանաչում են իմացածի և չիմացածի սահմանները: Սովորողները ինքնակազմակերպվում են և ձևավորում են ժամանակի արդյունավետ կառավարման հմտություն: Նրանք կարողանում են գնահատել սեփական և մյուսների ֆիզիկական ու հոգեբանական հնարավորությունները, սովորում են աշխատել ծանրաբեռնվածության պայմաններում: Սովորելու ընթացքում աշակերտները ձևավորում են իրողությունները քննադատաբար և բազմակողմանի ուսումնասիրելու, վերլուծելու, ինչպես նաև ստեղծագործական ու նորարար մոտեցումներ կիրառելու ունակություններ: Սովորողները ձևավորում են համակարգային և ինտեգրված մտածողություն/

- **Թվային և մեդիա կարողունակություն/** սովորողները տիրապետում են մեդիագրագիտության կանոններին ու հմտություններին. պատկերացնում են մեդիայի աշխատանքը և դերը ժողովրդավարական հասարակությունում, կարողանում են կողմնորոշվել տեղեկատվության հոսքերում, գտնել և տարածել տեղեկություններ, քննադատորեն վերլուծել դրանք, գնահատում են մեդիայի ազդեցությունը սեփական և այլոց արժեքային պատկերացումների, դիրքորոշումների և գործողությունների վրա: Թվային մեդիայի օգտագործման հնարավորությունների կողքին գիտակցում են նաև դրանց հետ կապված ռիսկերը, ունակ են գնահատելու և վերափոխելու իրենց վարքը թվային աշխարհում՝ անվտանգության, պատասխանատվության և էթիկայի տեսանկյունից: Տիրապետում են մեդիա արտադրանք ստեղծելու տեխնիկական և ստեղծագործական հմտություններին, ինչպես նաև կարողանում են արդյունավետորեն կիրառել մեդիա գործիքները քաղաքացիական իրավունքների իրացման ու ժողովրդավարական գործընթացների մասնակցության նպատակով/

